

Այն ատեն երկու մեծակաթիլ ար-
ցունքներ ինկան Տըղլինկէնի բարե-
սիրտ գործաւորին աչուքներէն և սիր-
տը տրորեցաւ : . . . Բայց քիչ ատենէ
մխիթարուելով, « խեղճ ֆաննիդֆէրս-
դան, կանչեց, ինչ մնաց հիմա ձեռքդ
բոլոր ունեցած հարստութիւններէդ,
բայց եթէ ինչ որ ես ալ աղքատու-
թեամբս հետս պիտի տանիմ, սե լաթ
մը, վարչամակ մը. և բոլոր գեղեցիկ
ծաղկըներէդ՝ թերեւ խնկունի՝ մը ցըր-
տացեալ կուրծքիդ վրայ և կամ պըզ-
տիկ անթառամ մը » : Այս և այսպիսի
բաներ մտածելով զնաց մեռելոյն ե-
տեէն ինչուան գերեզման, իբրեւ թէ
յուզարկաւորներէն ըլլար. տեսաւ մի-
լիոններու տէր մարդուն իր խաղաղու-
թեան քնարանն իջնալը, և շատ աւելի
խանդաղատեցաւ հոլանտերէն դամբա-
նականէն ուսկից բան մըն ալ չհասկը-
ցաւ քան թէ այնչափ գերմաններէն քա-
րոզներէ որոնց ամենեկին մտիկ չէր ը-
րած : Յետոյ ինքն ալ ուրիշներու պէս
իր տեղը դարձաւ՝ սիրտը քիչ մը թե-
թեցած, և պանդուկը մտնալով ուր գեր-
մաններէն կը խօսուէր՝ աղէկ ախորժա-
կով Լիմպուրկի պանիրի կտոր մը կե-
րաւ. և ամեն անգամ՝ որ նախանձիլը
կու գար տեսնելով քան զինքը աւելի
հարուստ այնչափ հոգի, մխիթարուե-
լու համար կը յիշէր Պ. ֆաննիդֆէրս-
դանը, իր հոյակապ տունը, փառաւոր
նաւը և անձուկ գերեզմանը :

Բայց մոռցայ հոլանտերէն պատաս-
խանին թարգմանութիւնը ձեզի տա-
լու, որ այս երիտասարդ գերմանացի
գործաւորին այնպիսի խորունկ և օգ-
տակար բարոյական խորհրդածութիւն-
ներ ազդեց՝ որչափ որ կրնար ազդել
իրեն Սենեկայի կամ Կիկերոնի մէկ ի-
մաստասիրական գրուածքը :

Այն երեք անցաւորները որոնցմէ
խեղճ գործաւորը տեղեկութիւն ուզեր
էր պալատին, նաւուն և թաղմանը վը-
րայ, միայն իրենց մայրենի լեզուն հո-

լանտերէնը գիտէին : Անոր համար ե-
րեքն ալ մի և նոյն կերպով Kan nit
verstan պատասխաններ էին, որ հայե-
րէն կը թարգմանուի Չեմ հասկընար :

Սակայն ինչ փոյթ. բառի մը նշա-
նակութեան սխալ հասկացումը ճամ-
բորդին մտքին մէջ բարոյական ճշմար-
տութիւն մը զարթուցեր էր. ականջը
խաբուեր էր, և ոչ թէ սիրտը :

Գործարանաւոր և իշխերը փտուքեմէ
ազատ պահելու վրայ :

Գործարանաւոր մարմինը կ'ըսուին
բուսական և կենդանական նիւթերը,
որը բնութեան ուրիշ ամեն մարմիննե-
րէն աւելի ենթակայ են ապականու-
թեան և փտութեան : Այսպիսի մար-
մինները երկար ժամանակ անայլալակ
պահելու համար, պէտք է կատարել
հետագայ պայմանները. այս ինքն Ս,
զնել այնպիսի բարեխառնութեան մէջ
որ 5 աստիճանէ պակաս ըլլայ, Բ, մեր-
կացունել 'ի ջրոյ և 'ի թթուածնէ : Ուս-
տի գործարանաւոր մարմին մը փտու-
թենէ ազատ պահելու համար, պէտք
է կամ զնել զնա սառուցի աստիճանի
մէջ, կամ բոլորովին չորցունել զնա,
և կամ զնել այնպիսի տեղ ուր թթուա-
ծին չըլլայ : Կրնամք նաև գործածել
այնպիսի մարմիններ որը գործարանա-
ւոր նիւթոց հետ կարենան յօրինել
անփտելի բաղադրութիւններ :

Առաջին պայմանը այս ինքն մարմին-
ները զրոյ աստիճանի մէջ պահելը, զը-
ժուարին է կատարել. փորձեցին պա-
հել ձուկը սառի մէջ բայց չյաջողեցաւ :
Երկրորդ պայմանը, այսինքն ջրէ ազատ
պահելը աւելի դժուար է կատարել, չոր-
ցունելով բուսական և կենդանական
նիւթերը արեւու կամ ջերմանոցներու
մէջ : Երբեմն կը գործածուի աղ և շա-
քար, նիւթը նախ չորցունելով. այս
կերպով կրնամք պահել տառեխ և ուրիշ
ձկներ : Կերակրոյ աղն ոչ միայն իրեն

կը ձգէ զջուր, այլ և յօրինէ բաղադրու-
թիւնս անփտելիս, միանալով գործա-
րանաւոր նիւթոց հետ, և կը հակառա-
կի մանրացուցական որդանց գոյացու-
թեան, որը են պատճառ փտութեան:

Իսկ այն պայմանն որ ըսինք, գործա-
րանաւոր նիւթերը փտութենէ ազատ
պահելու համար, դնել այնպիսի տեղ
ուր թթուածին չըլլայ, քան զամեն
պայման լաւագոյն է, բայց դժուարին:
Թէ որ ուղեմք պահել նիւթ մը որոյ վե-
րայ օդոյ թթուածինը ազդած ըլլայ,
և նիւթը սկսած ըլլայ տարրաբաշխիլ,
թէպէտ և հեռացունեմք նիւթը թը-
թուածնի ազդեցութիւնէ, և սակայն փտու-
թիւնը առաջ կ'երթայ: Բաց ասկէ,
պէտք է գիտնալ որ գործարանաւոր նիւ-
թերը կը պարունակեն իրենց ծակտեաց
մէջ մթնոլորտի օդ, զոր դժուարին է
հանել, և այն բաւական է փտեցունելու
զանոնք: Ուստի ըսածնէս յայտնի կ'ե-
րեի, թէ գործարանաւոր նիւթերը չոր-
ցունելը ամենէն աւելի գործածական
և ընդունելի կերպն է:

Ծխոռմն մնոյ և ձկանց, — Շատ ան-
գամ բաւական չեն համարիր աղել
ձկներն ու միսը, այլ կը չորցունեն ևս
զանոնք ծխով: Ծխելոյ արուեստը ծաղ-
կած է յոյժ Ամպուրկ քաղաքին մէջ:
Միսը կտոր կտոր ջարդելէն և աղելէն
ետեւ, կը կախեն չորս կամ հինգ չաբաթ
սենեկի մը մէջ, կաղնւոյ չոր տաշեղաց
ծխոյն մէջ, կը ծխեն տառեխն և ուրիշ
ձկները, կախելով 24 ժամ ծխահանի
մէջ, այրելով այնպիսի փայտ որ արծա-
կեն ծուխ բազում: Համբաւաւոր են
յոյժ Հոլանտիոյ ծխեալ ձկներն, որով
մեծ առուտուր կ'ընեն: Ծխեալ միսն ու
ձկներն կրնան երկար ժամանակ պա-
հուիլ անայլայլակ:

Ամփէրի գաղղիացոյ կերպը միսն
և ուրիշ նիւթերը անփոշոտ պահելու
համար: — Ամփէր առաջարկեց նոր
կերպ մը միս, ընդեղէն և պտուղներն
թարմ պահելու համար, որ և հաստա-
տեալ է այս սկզբանց վրայ. Ա. Այն
նիւթերն որ ծծեցին օդոյ թթուածինը
և խմորեցան, կորուսանեն իրենց խմո-

րումը եթէ դրուին 100° ջերմութեան
մէջ. և խմորին դարձեալ եթէ ծծեն
նորէն թթուածին կազ: Բ. Գործարա-
նաւոր նիւթերը որ դրուած ըլլան այն-
պիսի ամաններու մէջ որոց բերանը լաւ
գոցուած ըլլայ, կը ծծեն ամանին մէջ
եղած բովանդակ թթուածինը առանց
խմորելոյ: Արդ Ամփէր կ'ընէր այսպէս,
կը դնէր օրինակ իմն սիսեռն կամ մաշ
շըշի մէջ, կը փակէր լաւ մը անոր բե-
րանը, կը ձիւթէր խիցը, և յետոյ ջրա-
լից ամանին մէջ դնելով կը տաքցունէր
ջուրը մինչև սկսի եռալ. Զուրը տաքնա-
լու ժամանակ, շըշին մէջ դրուած նիւ-
թերն կը ծծեն շըշին մէջի օդոյն թթու-
ածինը, որոյ տեղ չկրնար փոխանա-
կել դրսէն արտաքին օդոյն թթուածի-
նը: Այսպէս կրնան ընդեղէնք ամբողջ
տարի մը թարմ պահուիլ: Այս կեր-
պով կրնամք պահել ուրիշ որ և իցէ
բուսական և կենդանական նիւթեր:

Պերար գաղղիացին պտուղները պա-
հելու համար խորհուրդ տուաւ գոր-
ծածել բորակածին կազ, զոր կրնամք
ունենալ դնելով ջրատ երկաթային այն
ամաններուն մէջ ուր դրուած են պը-
տուղներն: Թթուուկն երկաթային ծծե-
լով օդոյ թթուածինը, ազատ կը թո-
ղու գրորակածին:

Փրիսթլէյ անգղիացին փոխանակ եր-
կաթային թթուուկի կը գործածէր եր-
կաթական թթուուկ, որ աւելի օգտա-
կար է: Բայց այս նիւթն ալ չենք կրը-
նար չափէն աւելի գործածել, վասն զի
միսը կարմիր գոյն կ'առնու, և երբեմն
անախորժ համ մը:

Կրնամք թարմ պահել միսը ընկըղ-
մելով կէս ժամ կրէոզոտի լուծման
մէջ, և չորցունել արևու մէջ: Կը կար-
ծրանայ ութ օրուան մէջ, և կ'առնու
հաճոյական համ, նման ծխեալ մսոյ:
Սոյն կերպով կը պահեն նաև ձկները: